

ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՂ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(V դ. – XX դ. սկիզբ)*

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր՝ պատմիչ-պատմաբաններ, Խորենացի, Հայաստան, պատմութ-
յան պարբերացում, հասարակարգ, Չամչյան, Ալիշան, Լեո, Ադոնց:

Ամփոփում

Հայ պատմագրության կարևոր հիմնահարցերից է Հայոց պատմության պարբերացումը, որը, անշուշտ, նպաստում է Հայաստանի ու Հայ ժողովրդի պատմական անցյալի համակարգված շարադրման, գիտական հետազոտության մակարդակի բարձրացման և պատմական ճշմարտության բացահայտման իմաստով: Հայ պատմիչ-պատմագիրների հարուստ գրավոր ժառանգությունը հիմք է տալիս ասել, որ ի սկզբանե փորձեր են արվել Հայոց պատմության պարբերացման ուղղությամբ: Նման քայլի առաջնեկը Հայ պատմագրության հիմնադիր հայր Մովսես Խորենացին է իր «Հայոց պատմություն» կոթողային աշխատությամբ (V դար): Հետագա դարերում Հայ պատմիչ-պատմաբանները՝ Սեբեոսը, Կ. Գանձակեցին, Ա. Դավրիժեցին և ուրիշներ, հիմնականում շարունակել են խորենացիական ավանդները ինչպես պատմության շարադրման, այնպես էլ դրա ժամանակային համակարգման ուղղությամբ: Հայ պատմիչների միջնադարյան ժամանակաշրջանի աշխատությունների քննությունը ցույց է տալիս, որ նրանց երկերում, բնականաբար, մեծ է եղել քրիստոնեական, աստվածաշնչյան մտածելակերպը և գործելակերպը:

Արդեն նոր դարաշրջանում պատմության պարբերացման եվրոպական բազմազործոն մոտեցումներին ու չափանիշներին հաղորդակից լինելը մեծապես նպաստել է պատմության վերաբերող աշխատությունները ժամանակային ու բովանդակային առումներով համապատասխանեցնել արևմտյան չափանիշներին՝ անշուշտ, հաշվի առնելով Հայոց պատմության առանձնահատկությունները: Այդ ուղղությամբ հարկ է հատուկ առանձնացնել Մխիթարյան միաբանության Հայ երախտավոր պատմագիր հեղինակներից Մ. Չամչյանին, իսկ ավելի ուշ՝ արևելահայ պատմագրության ականավոր ներկայացուցիչներ Լեոյին, Ն. Ադոնցին և Հ. Մանանդյանին, որոնք իրենց մինչխորհրդային աշխա-

* Ներկայացվել է 23. V. 2025 թ., գրախոսվել է 05. VI. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:

© Հեղինակներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

տուժյուններում ներկայացրել են հայոց պատմությունը ոչ միայն զուտ ժամանակագրական-փուլային բաժանումների տեսքով, այլև պարբերացումները կատարելիս հաշվի են առել տվյալ ժամանակաշրջանի պետաիրավական, քաղաքական, ընկերային-արտադրատնտեսական, դասակարգային կառուցվածքի, հոգևոր-մշակութային հարաբերությունները փաստարկված հոլովույթի մեջ:

Նախաբան

Պատմագիտական հետազոտության կարևոր հիմնախնդիրներից է պատմության գիտականորեն համակարգված ու ժամանակային որոշակի շրջանակի մեջ պարբերացումը, առանց որի այն կվերածվի թվերի ու փաստերի մի անձև քառույթ: Ընդհանրապես, յուրաքանչյուր առարկայի պատմության գիտականորեն հիմնավոր պարբերացումը նպաստում է նրա պատմական զարգացման ընթացքի ճշմարիտ ընկալմանն ու լուսաբանմանը:

Եվ պետք է ասել, որ ի սկզբանե հայ պատմիչ-պատմաբանները փորձեր են արել ժամանակային ու բովանդակային առումներով համակարգել ու պարբերացնել հայոց պատմությունը հասկանալիորեն մինչև իրենց ապրած ժամանակները: Հայոց պատմության պարբերացման գործընթացը կարելի է բաժանել մի քանի փուլերի՝ մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային:

Հայոց պատմության պարբերացման հիմնահարցը, սկսած պատմահայր Մ. Խորենացուց, դարերի ընթացքում հայ պատմագրության մեջ բարեշրջում է ապրել: Չնայած խորհրդային շրջանում գաղափարական տրամաբանությունամբ այն շեղում ապրեց՝ հանձին մարքս-լենինյան հասարակական-տնտեսական հնգաստիճան ֆորմացիոն սկզբունք-մոդելի, սակայն Հայաստանի անկախության վերականգնումից հետո այն կրկին շտկվեց ու համապատասխանեցվեց համաշխարհային բազմազործոն պարբերացման չափանիշներին և մեզանում, իբրև առանձնահատկություն, դրվեց պետականության գաղափարը՝ որպես հայոց պատմության պարբերացման հիմնական գործոն:

Հայոց պատմության պարբերացման պատմագիտական հետադիժը մարքս-լենինյան հնգաստիճան ֆորմացիոն մոդելով արմատավորելու տեսակետից գաղափարաքաղաքական լուրջ գիտաժողով-քննարկումների բնույթ ստացավ խորհրդահայ պատմագրության մեջ, իսկ հետագայում այն սկզբունքային փոփոխություն կրեց՝ ավելի հիմնավոր ու գիտական բովանդակություն ձեռք բերելով նորանկախ Հայաստանի երրորդ Հանրապետությունում:

Մասնավորապես, խորհրդային պատմաշրջանում Հայաստանի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված գիտաժողով-քննարկումներ անցկացվեցին 1925 թ., 1946 / 1948 թթ. և 1951 թ.: 1925 թ. խորհրդաժողովում, մասնակցությամբ պատմաբաններ՝ Աշ. Հովհաննիսյանի, Հ. Մանանդյանի, Լեոյի, Թ. Ավդալբեկյանի, Դ. Անանունի և ուրիշների, քննարկումների արդյունքում, տեսակետների տարբերությունների (տարածայնությունների) հետևանքով չի հաջողվում մարքս-լենինյան հնգաստիճան ֆորմացիոն սկզբունքի արմատավորման ուղղությամբ վերջնարդյունքի հասնել¹:

Արդեն հետպատերազմյան շրջանում 1946 / 1948 թթ. և 1951 թ., հայոց պատմության պարբերացմանը նվիրված գիտաժողով-քննարկումներում, որին մասնակից են եղել պատմաբաններ Ա. Աբրահամյանը, Ս. Հակոբյանը, Ս. Երեմյանը,

¹ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1990, 127-132:

Գ. Սարգսյանը, Ս. Պողոսյանը, Աբ. Հովհաննիսյանը և ուրիշներ, սկզբունքորեն հավանություն է տրվում մարքսյան դասակարգային հնգաստիճան ֆորմացիոն մոդելին: Ընդ որում՝ արձանագրվում է, որ Հայաստանում իբրև թե գոյություն է ունեցել ստրկատիրական հասարակարգ²:

Արդեն նորանկախ Հայաստանի Հանրապետությունում պատմության պարբերացման հիմնահարցում հանդես է բերվել միանգամայն սկզբունքային այլ մոտեցում ու մեթոդաբանություն: 1992 և 2017 թթ. երևանում կազմակերպված գիտաժողովներում՝ մասնակցությամբ պատմաբաններ Լ. Խուրչուդյանի, Վ. Դիրոյանի, Պ. Հովհաննիսյանի, Ա. Միմոնյանի, Պ. Ավետիսյանի, Աչ. Մելքոնյանի, Ռ. Սաֆրաստյանի, Ա. Մովսիսյանի, Ա. Եղիազարյանի, Կ. Խաչատրյանի և ուրիշների, տեղի ունեցած գիտական քննարկում-բանավեճերի արդյունքով կատարվում է հայեցակարգային փոփոխություն՝ հայ պատմագրությունը և պատմագիտական միտքը վերջնականորեն հրաժարվում է մարքս-լենինյան դադափարաքաղաքական կարծրատիպերից և, որպես տեսական-մեթոդաբանական սկզբունք ու չափանիշ, որդեգրում է պատմության պարբերացման արդի գիտական չափանիշներին համապատասխանող բազմագործոն շրջափուլային սկզբունք-մոդելը՝ այդ ճանապարհին հիմքում ունենալով հայոց հազարամյակների պատմության բուն ընթացքը, նրա պատմական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ պատմության պարբերացումների համաշխարհային փորձը³:

Միջնադարյան հայ պատմագիրների պարբերացման փորձերը

Հայ իրականության մեջ հայոց պատմության պարբերացումը գործնականում սկզբնավորվել է հայ պատմագրության ձևավորման հետ և դրա սկզբնավորող համարվում է Քերթոզահայր Մովսես Խորենացին (մոտ 410–493 թթ.): Ավելին՝ Գ. Սարգսյանը Խորենացուն համարում է ոչ միայն պատմիչ, այլև գերազանցապես պատմաբան ու գիտական հետազոտող⁴: Մ. Խորենացին, իրավամբ, հայոց պատմության պարբերացման հիմնադիրն է: Հարկ է նկատել, որ պատմության պարբերացման խնդրի հետ է կապված նաև դեպքերի և իրադարձությունների լայն առումով ժամանակագրությունը: Հայտնի է, որ Պատմահայրը շատ մեծ տեղ է տվել ժամանակագրությանը՝ ասելով. «Ոչ է պատմությունն ստուգ, առանց ժամանակագրության»⁵: Ակա՛ծ Խորենացուց՝ հայ պատմիչ-պատմագիրները իրենց ժամանակատարածական հատույթում բուն պատմության շարադրանքի հետ փորձել են ժամանակային առումով պարբերացնել հայոց պատմությունը:

Պատմահայր Խորենացին մինչև իր ապրած ժամանակաշրջանը, այսինքն՝ մինչև V դարը, հայոց պատմությունը բաժանել է երեք հիմնական փուլի, ներկայացվել են երեք գրքերի ձևով, որոնք, փաստորեն, բովանդակում են հայոց ամբողջական պատմությունը:

² Հ ա կ ո բ յ ա ն. 1947, № 7, 35–58, 1948, № 8, 13–38, № 11, 33–77, 1952, № 1, 115–124, Е р е м я н. 1950, 12–26.

³ Մ ա ն Ր ա մ ա ս ն տ ե ' ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1993, № 4, 148–161, Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները. 2017, 194–240, տե'ս նաև Ս ա ր ո լ - խ ա ն յ ա ն. 2013:

⁴ Տ ե ' ս Ս ա ր գ ս յ ա ն. 1965, 5, 146:

⁵ Խ ո ր ե ն ա գ ի. 1961, 40:

Առաջին փուլը կամ գիրք Առաջին «Մենդոցը», բնականաբար, սկսել է նախապատմական Ջրհեղեղից ու Հայոց մեծերի՝ Նոյի որդիներից Հաբեթի, այնուհետև՝ Թորգոմի, Հայկի և մյուս ժառանգների ծնունդից՝ ընդգրկելով մինչև Ք. ա. II դ. կեսերը (132 թ.), այսինքն՝ ավանդական պատմությամբ Պարսից Արշակ թագավորի կողմից իր եղբորը՝ Վաղարշակին, Հայաստանի վրա թագավոր կարգելը՝ իբրև Առաջին գրքի ավարտ⁶: Նկատենք, որ Մ. Խորենացու՝ Հայկյանների մասին ավանդապատումում նկարագրված Հայկ Նահապետի՝ իր ընտանիքով Արարադի երկրում հաստատվելը և Ք. ա. 2492 թ. իրեն հետապնդող բռնակալ Տիտանյան Բելին հաղթելն ու նրա 300 հոգանոց ընտանիքի անդամների Հայք-Հայաստանով մեկ բնակեցնելը ինքնին խորհրդանշում է Հայկական պետականության առաջացումը: Երկրորդ գիրքը կամ «Միջին պատմություն մեր նախնիքների» ներառված է Ալեքսանդր Մեծի պատմությունից մինչև Սբ Տրդատ Մեծ թագավորի գահակալման չրջափուլի ավարտը՝ Ք. հ. IV դարի 20-ական թվականները⁷: Եվ երրորդ գիրքը կամ ժամանակահատվածը, որը վերնագրել է «Մեր հայրենիքի պատմության ավարտը» կամ «Ավարտաբանության» չրջանը, ընդգրկում է Հայոց հայրապետ (եպիսկոպոսապետ) Մեծն Վրթանեսից մինչև Արշակունյաց թագավորության անկումը (428 թ.) «Ողբը», «Մեծն Սահակ Պարթևի և երանելի Մեսրոպի մահը, այսինքն՝ մինչև իր ժամանակը՝ V դարը»⁸:

Ավելին՝ Մ. Խորենացին ոչ միայն պատմության պարբերացման փորձ է արել, այլև Հայոց պատմությունը ժամանակագրական առումով փորձել է ներդաշնակել հարևան պետությունների՝ պարթևա-պարսկական և սելևկյա-հռոմեական հարստությունների թագավորների ու կայսրերի գահակալումների ժամանակագրությունների, ինչպես նաև ընդհանրական բնույթի (քաղաքական, սոցիալական, տնտեսական) շատ հարցերի հետ: Ընդ որում Մ. Խորենացու ժամանակագրությունը սկսվում է Առաջավոր Ասիայում Սելևկոս Նիկատորի իշխանության առաջին տարվանից, այսինքն՝ Սելևկյան տոմարին մոտ տարվանից (Ք. ա. 311 թ.)⁹: Եվ այդ ժամանակագրական համակարգի կիրառման մեթոդով հնարավոր է դառնում ներկայացնել ոչ միայն Հայք-Հայաստանյան, այլև հարակից երկրների, այդ թվում՝ Պարսից և Հռոմի պատմության շատ հարցեր:

Ի մի բերելով Պատմահայր Մ. Խորենացու երկում առկա մտքերն ու դատողությունները Հայոց պատմության պարբերացման և պետականության գաղափարի մասին՝ կարելի է ասել, որ միանգամայն ընկալելի և ընդունելի է նրա ներկայացրած պատմության փուլաբաժանությունն իր ժամանակի ու տարածության մեջ, իսկ պետականության գաղափարը նա մարմնավորել է հանձին Հայոց խորհրդանիշ Հայկի տարած հաղթանակի ու իր հայրենիքի՝ Հայք-Հայաստանում ծավալած գործունեության: Կարելի է համաձայնվել պատմաբան-մշակութաբան Գ. Վարդույանի այս առնչությամբ տրված այն մեկնաբանությանը, որ Հայկ Նահապետը ներկայանում է «հայերի» կամ «արմենների» էթնոնիմն ու Հայաստանի տոպոնիմը իբրև Հայկական պետականության գա-

⁶ Խորենացի. 1961, 22, 79–137:

⁷ Տե՛ս Խորենացի. 1961, 147–262:

⁸ Խորենացի. 1961, 265–355:

⁹ Տե՛ս Սարգսյան. 1965, 15–22:

ղափարի, թերևս, առաջին կրողն ու սկզբնավորողը, իսկ Հնագույն ու Հին Հայաստանում պետականության ձևավորման գործում կրոնական ու պաշտամունքային գործոնները խաղացել են որոշակի համախմբիչ դեր¹⁰:

Հայ պատմիչ-պատմագիրներից պատմության պարբերացում է կատարել Սեբեոս եպիսկոպոս պատմիչը՝ սկսելով Հայոց պատմությունը Վիպասանական շրջանից մինչև իր ժամանակը՝ VII դ.: Նա պատմության ժամանակային բաժանումը կատարել է ըստ 3 շրջանների՝ 1. Վիպասանական շրջան, 2. դրան հաջորդող պատմական միջնաշրջան և 3. ժամանակակից շրջան¹¹: Ինչպես ասվեց, բնականաբար, այդպես պիտի լինեն. միջնադարյան Հայ պատմիչ-պատմագիրներն ավելի շատ շեշտը դրել են իրենց ապրած, թերևս, բազմաչարչար կյանքի դրվագների պատմությունը:

Մ. Խորենացու և Սեբեոսի այդ պարբերացումներն աննշան փոփոխություններով հիմնականում կրկնել են միջնադարյան մեր մյուս պատմագիրները: Ի դեպ, վաստակաշատ պատմագիր Ղ. Ալիշանը Հայոց վերջին պատմիչ համարում է Առաքել Դավրիժեցուն (XVII դ.)¹²: Վերջինս Փղիպոս կաթողիկոսի հանձնարարությամբ գրել է իր ժամանակների շատ հազեցած պատմությունը՝ ժամանակագրական առումով հետևելով Քերթողահոր պատվիրանին, սակայն հատուկ պատմության պարբերացում չի կատարել, քանզի նրա պատմության առանցքը հիմնականում ընդգրկել է ժամանակային ավելի նեղ՝ XVII դ. առաջին կեսի իրադարձությունները՝ Շահ-Աբասի արշավանքը Հայաստան, Նոր Զուղայի հիմնադրումը, Զալալիների ապստամբությունը, թուրք-պարսկական պատերազմները և այլն¹³: Դավրիժեցու գրքի աղբյուր են հանդիսացել իր տեսածը, մանր ժամանակագրությունները, ականատեսների պատմածը, թեև հազվադեպ է հղում աղբյուրը:

Ընդհանուր առմամբ, միջնադարյան Հայ պատմիչ-պատմագիրների մոտ Հայոց պատմության պարբերացման հարցում կարելի է տարբերակել երեք մոտեցում՝ 1. որ հեղինակների մի մասն առաջնորդվել է Խորենացու առաջադրած սկզբունքով¹⁴, երբ պատմությունը սկսում է ի սկզբանե «Հայկ և Բել» ավանդապատումից մինչև իր ապրած ժամանակաշրջանը, 2. որ սահմանափակվել է միայն բուն ժամանակաշրջանի պատմական դեպքերի և իրադարձությունների նկարագրությամբ՝ կատարելով ժամանակագրական որոշ բաժանումներ և հետևողական չի եղել պատմության պարբերացման հարցում, և 3. որ պարզապես սահմանափակվել է Հայ նախարարական կամ արքայական տոհմի պատմության շարադրմամբ: Այսպես՝ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին Հայոց պատմությունը սկսել է քրիստոնեության ընդունումից մինչև X դ. իր

¹⁰ В а р д у м я н. 2024, 6, 20.

¹¹ Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն. 1939:

¹² Ա լ ի շ ա ն. 1901, 5:

¹³ Տե՛ս Դ ա վ ը ի ժ ե ց ի. 1990:

¹⁴ Նկատենք, որ Պատմահոր աշխատությունից ձեռագրերի և հատվածական կամ պատառիկ արտագրությունների վիճակով օգտվել են հետագա ժամանակների Հայ պատմիչ-պատմագիրները: «Հայոց պատմություն»-ն ունեցել է բազում խմբագրություններ, իսկ հայերեն անդրանիկ տպագրությամբ լույս է տեսել Ամստերդամում 1685 թ.:

աթուղակալումը¹⁵: XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերցին սելջուկյան արշավանքների փոթորիկահույզ և աղետաբեր շրջանին վերաբերող իր պատմությունում լայն ընդգրկմամբ պարբերացում չի կատարել: Իր ներկայացրած պատմությունը բաժանել է 25 մասերի՝ այն սկսում է Բագրատունյաց վերջին գործը թագավոր Գագիկ I-ից (990–1020 թթ.) և հասցնում մինչև Բյուզանդիայի Միքայել է Դուկաս (1071–1078 թթ.) կայսրը¹⁶: Կամ, օրինակ, Թովմա Արծրունի և Ստեփանոս Օրբելյան պատմիչներն անդրադարձել են սոսկ իրենց նախարարական տոհմերի պատմություններին¹⁷: XIII դ. պատմիչ Վարդան Արևելցու «Տիեզերական պատմությունը» ևս պարբերացված չէ, թեև հպանցիկ այն սկսում է Երկրի արարչագործությունից՝ հասցնելով մինչև իր ժամանակները՝ 1267 թ.¹⁸: Իսկ Վարդան Արևելցու ժամանակակից Կիրակոս վրդ. Գանձակեցու (1203–1271 թթ.) ուշագրավ երկասիրությունը ժամանակագրական առումով անհամեմատ պարբերացված է. նախ ուրվագծի ձևով ներկայացված է Հայոց և տարածաշրջանի պատմությունը՝ սկսած Սբ. Գրիգոր Լուսավորչից, ապա ավելի հանգամանորեն հասցնում է այն մինչև իր վերջին օրերի իրադարձությունները, այսինքն՝ XIII դ. երկրորդ կեսերը¹⁹:

Այսպիսով գրեթե առանց բացառությունների Հայ պատմիչ-պատմագիրները, թերևս, բացի Պատմահորից, որոշակի խնդիր չեն դրել իրենց առջև՝ տալ «Հայոց պատմություն»-ը գիտական պարբերացման սկզբունքով, քանզի միջնադարյան աշխարհը մեղմումների և պատմափոխադարձական ընկալումների ու գիտելիքների մակարդակը, ըստ էության, այդ հնարավորությունը չի տվել: Սակայն նրանք պատմությունը շարադրելիս գերազանցապես առաջնորդվել են քրիստոնեական աշխարհայեցողությունից ու աստվածաբանական մոտեցումներով, մանավանդ որ միջնադարյան պատմիչ-պատմագիրների մեծագույն մասը եղել են հոգևորականներ: Այստեղից էլ նրանց պատմական աշխատություններին թե՛ ժամանակագրական բաժանման և թե՛ բովանդակային տեսակետից բնորոշ է եղել աստվածաշնչյան մեկնությունները, ավելի շատ կրոնական կանոնները, ոգին ու մոտեցումները: Այս առնչությամբ, ռուս տարագիր փոխադարձ Նիկոլայ Բերդյաևի (1874–1948 թթ.) դատողությամբ՝ պատմության աստվածաբանական պարբերացման համաձայն՝ երկրային մարդն անցավոր է, նրա պատմությունը՝ կանխորոշված ու ժամանակավոր, իսկ երկնայինը, Աստվածայինը հավերժական է: Դրա համար էլ մարդն անընդհատ ձգտում է Աստծուն: Եվ նրանց միացումով իբրև կավարտվի պատմությունը²⁰: Այս համատեքստում, հասկանալի է, որ միջնադարյան Հայ պատմիչ-պատմագիրները հաղորդակից չէին արևմտաեվրոպական (Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա) պատմափոխադարձական մտքի նվաճումներին և պատմության պարբերացման գիտական սկզբունքներին ու չափանիշներին:

¹⁵ Դրասխանակերտցի. 1996:

¹⁶ Լաստիվերցի. 1971, 5–105:

¹⁷ Արծրունի և Անանուն. 1978, 44–308, Օրբելյան. 1986:

¹⁸ Արևելցի. 2001:

¹⁹ Գանձակեցի. 1982, 21–283:

²⁰ Տե՛ս Բերդյաև. 2019, 10–11, 231–232, նաև՝ Бердяев. 1990, 81.

Նոր շրջանի հայ պատմագիրները դիտարկումները հայոց պատմության պարբերացման հարցում

Արդեն բոլորովին այլ վիճակ ենք տեսնում Նոր դարաշրջանի արչալույսից, երբ Մխիթարյան միաբանության պատմագիր հեղինակների աշխատություններում, որոնք, հաստատվելով ու գործելով Վենետիկի Սբ Ղազար կղզում, Վիեննայում, Կ. Պոլսում և այլուր, մեծապես հաղորդակից են դառնում եվրոպական պատմափիլիսոփայական մտքին, Ռեֆորմացիայի, Վերածննդի ու Հումանիզմի դարաշրջանի առաջադեմ գաղափարներին ու սկզբունքներին՝ իրենց ծանրակշիռ ներդրումն են ունենում հայոց պատմության բազում հիմնահարցերի, այդ թվում՝ նաև պատմության պարբերացման ուղղությամբ: Այդպիսի ներկայացուցիչների թվին է դասվում եվրոպական պատմափիլիսոփայական մտքի ու արժեքների հետ սերտ կապված, ճանաչված պատմագիր ու պատմաբան Միքայել Չամչյանը (1738–1823 թթ.) հանձին իր եռահատոր մեծածավալ «Հայոց պատմություն» աշխատության: Նա, հայոց համակարգված պատմության բազում հիմնահարցերի քննությունից զատ, փորձել է ժամանակագրական առումով պարբերացնել այն: Հեղինակը պատմության պարբերացումը ստորաբաժանել է 6 հիմնական ժամանակային շրջափուլերի՝ դրանց հիմքում դնելով հայկական թագավորությունները, այսինքն՝ պետականության գաղափարը՝ որպես ազգ-ժողովրդի համախմբման ու կազմակերպման լավագույն ձև: Մ. Չամչյանը պատմության պարբերացումը սկսում է, ինչպես նախկինում սովորաբար ընդունված էր, հին և միջին դարերից՝ աշխարհի արարչագործությունից, առաջին մարդկանց արարումից մինչև «ի Նոյ և անտի մինչև՝ ի Հայկ, որից վերընձյուղվել են մեր ազգի նահապետները»²¹: Չամչյանի պարբերացմամբ՝ բերվում է պատմական վեց շերտ՝ «Առաջին. պայազատեցին (ժառանգեցին – Ա. Հ.) նահապետքն հայկազինք՝ կէս մի ազգային տէրութեամբ, և կէս մի արքայական շքով և ապա կուսակալք: Երկրորդն է այն, յորում թագաւորեցին արչակունիք՝ ի սերնդոց արչակայ պարթևի: Երրորդն այն է, յորում իշխեցին մարզպանք պարսից, և ոստիկանք իշխանութեան հազարացւոց (արաբների – Ա. Հ.), ևս և նախարարք՝ ի հայոց: Չորրորդն է այն, յորում թագաւորեալ տիրեցին բազրատունիք: Հինգերորդն է այն, յորում զօրացան ուրբի նեանք՝ ի կիլիկիա, մինչև՝ ի բնաջինջ բարձուն տէրութեան հայոց: Վեցերորդն է այն, յորում կային և կան ազգ մեր յանիշխանութենէ: Եւ ահա ըստ վիճակի այսոցիկ վեց դարուցս բովանդակեմք զպատմութիւն մեր՝ ի վեց գիրս առաջի երեալ գո՛ւմ հարթ ոճիւ՝ և պարզ շարադրութեամբ»²²:

Հետագա շրջանում հայոց պատմության պարբերացման փորձեր են կատարել Ա. Գարագաշյանը, Դ. Ալիշանը, Հ. Գաթրճյանը, Ստ. Պալասանյանը, Բ. Պատկանյանը, Գր. Խալաթյանը և ուրիշներ: Նկատենք, որ Նոր դարաշրջանի հայ պատմագիրները, անշուշտ, օգտագործել են Վերածննդի և Լուսավորության դարաշրջանի մտածողների փուլաբաժանման սկզբունքները՝ հաշվի առնելով հայոց պատմության առանձնահատկությունները: Այսպես՝ Ա. Գարագաշյանն (1818–1903 թթ.) իր «Հայոց քննական պատմություն» բազմահատորյակը բաժանել է երկու գլխավոր ժամանակահատվածների: Այդ առնչությամբ նա գրում է. «Պատշաճ թուեցաւ մեզ Հայոց պատմութիւնը բաժանել երկու գլխաւոր ժամանակների՝ Ա. Նախնական և Բ. Պատմական: Նախնական

²¹ Չ ա մ չ ե ա ն ց. 1784, 51:

²² Չ ա մ չ ե ա ն ց. 1784, 50:

անուանեմք զմիջոցն, որ է ի սկզբանէ մինչև Տիգրան մեծ արչակունի, կամ մինչև Ք. ա. 90 նախքան զՔրիստոս: Պատմական անուանեմք զմիջոցն ի Տիգրանայ և այսր, կամ 90-էն նախ քան զՔրիստոսն մինչև մեր ժամանակը»²³: Հեղինակը նման բաժանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ նախնական պատմության մեջ շատ են ավանդույթներն ու առասպելախառն պատումները, իսկ հետտիգրանյան շրջանից մեր պատմությունը ներկայանում է որպես վավերական ու աղբյուրաշատ: Բայց դրա հետ նա անչափ բարձր է գնահատում Պատմաճայր Մ. Խորենացուն: Գարագաշյանը Խորենացուն համարում է այն առաջին պատմիչը, որ «զՀայս համարի սերեալ ի Հայկայ», ով չորրորդ (Դ) սերունդն էր Հաբեթից հետո²⁴: Նման գնահատականից հետո նա տալիս է հայոց ջննական պատմության բուն շարադրանքը:

Հայագիտության վաստակաշատ մշակ, Վենետիկի Սբ Ղազարի միաբան Ղևոնդ Ալիշանը (1820–1901 թթ.) և հոգևոր-կրոնական աշխարհայացքին հոգեհարազատ՝ հայոց պատմությունը սկսում է համաշխարհային ջրհեղեղից և «Նոյի նաւարկութեամբ ի ցամաք ելանելով ի Հայս» և նշում Թորգոմի 8 որդիներից մեկը Հայկն էր, ով կռվի է բռնվում Բեղի հետ, հետո եվրոպական ընդունված ժամանակային բաժանումներով ներկայացնում է Մեծ ու Փոքր Հայքերի պատմությունը՝ ընդգծելով հայոց արքաների, նախարարների ու, հատկապես, եկեղեցու խաղացած մեծ դերակատարությունը²⁵: Նա հայ ազգային ինքնութայան ընդգծման և արժևորման տեսակետից շատ բարձր է գնահատում սեփական ազգի պատմությունը: Ալիշանի արտահայտությունը՝ «Ամէն ազգի սեփականագոյն յիշատակն իր Պատմութիւնն է»²⁶:

Համաշխարհային պատմության ու այդ համատեքստում նաև հայոց պատմության պարբերացման ուղղությամբ փորձ է կատարել նաև պոլսահայ պատմաբան, հայագետ Հովսեփ Գաթրճյանը (1820–1882 թթ.) Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ)²⁷ և Վարդան Արևելցու նմանությամբ իր գրած «Տիեզերական պատմություն» երկհատոր աշխատությունում: Ըստ նրա աստվածաբանական-փիլիսոփայական մեկնության՝ պատմության մեջ ամեն ինչ փոփոխության է ենթարկվում: «Ամենայն ինչ որ փոփոխումն կրէ, – գրում է Գաթրճյանը, – տայ նիւթ պատմութեան՝ որ ոչ այլ ինչ է բայց ընծայութիւն փոփոխմանն այնորիկ ուստի ամենայն իրիք՝ բաց յԱստուծոյ որ առանց փոփոխութեան է, գոյ ինչ պատմութիւն»²⁸: Նա հասկանալիորեն տիեզերական պատմությունը լայն իմաստով բաժանել է երկու մեծ հատվածի՝ նախաքրիստոնեական (հին) և հետքրիստոնեական (նոր), այն է՝ «ի պատմութիւն յառաջ եւ յետոյ քան զքրիստոնէութիւն»²⁹: Բայցև միաժամանակ ժամանակագրական ու բովանդակային առումով համաշխարհային պատմությունն ավելի կոնկրետ բաժանել է երեք շրջափուլերի՝ 1. «Ի հին պատմութիւն, որ է ի սկզբանէ անտի յորինելոյ տէրու-

²³ Տե՛ս Գ ա ռ ա գ ա շ ե ա ն. 1895, 1:

²⁴ Տե՛ս Գ ա ռ ա գ ա շ ե ա ն. 1895, 4:

²⁵ Ա լ ի շ ա ն. 1901, 1:

²⁶ Տե՛ս Ա լ ի շ ա ն. 1901, 10:

²⁷ Տ ա ռ ո ն ց ի. 1885:

²⁸ Գ ա թ ը ը ճ ե ա ն ց. 1849, 1:

²⁹ Գ ա թ ը ը ճ ե ա ն ց. 1849, Ե:

թեանց ցՔրիստոս, եւ կամ յաճախագոյն սովորութեան մինչեւ ցգաղթականութիւնս ազգաց եւ ցկործանումն արեւմտեան տէրութեանն Հռոմայեցոց մինչեւ ցամն 476 կամ 480 յետ Քրիստոսի, նրա մեկ այլ ձևակերպմամբ՝ աշխարհի արարչագործումից ու Մեծ ջրհեղեղից մինչև Հիսուս Քրիստոսի ծնունդը (այսինքն՝ Ք. ա 4000, ավելի ստույգ՝ 2345 թ. – 1 թ. Ք. ծ.), 2. Ի միջին պատմութիւնն որ անտի ձգեալ (այսինքն՝ Քրիստոսի ծննդից սկսած – Ա. Հ.) հասանէ մինչեւ ցգիւտ աշխարհին Ամերիկացոց, եւ ծովային ճանապարհին որ ընդ արեւելեան Հնդկիս է, ցկատարած կոյս հինգետասաներորդ դարու 1492 (կոր ժամանակային արտահայտութեամբ՝ 1–1500 թթ.): 3. Ի նոր պատմութիւն, ի գիւտոյ անտի երկրին Ամերիկացոց ցմեր իսկ աւուրս (այսինքն՝ մոտ 1500 թ. մինչև 1848–1849 թթ. եվրոպական հեղափոխութեանները է – Ա. Հ.)»³⁰: Վերը բերվածից դժվար է կուհել, որ պատմագիր Հ. Գալթրոյանը լայն համայնապատկերով համաշխարհային պատմութեանը շարադրելիս պատմութեան իր պարբերացման հիմքում դրել է աստվածաբանական և պատմաաշխարհագրական գործոնները, ինչն ընկալելի ու տրամաբանական է նրա հոգևոր ծառայութեան և ուսումնասիրվող թեմայի մասշտաբային ընդգրկման տեսակետից:

Ռուսիանհայ պատմաբան Ստեփան Պալասանյանը (1837–1889 թթ.) հայոց պատմութեանը պարբերացման առումով բաժանել է վեց շրջանի՝ «Ա. շրջան՝ «Մեր ազգի ծագումից մինչև Պարթևաց Հայաստան գալը (2300–150 թթ. Ք. ա.), Բ. շրջան՝ Պարթևաց Հայաստան գալուց մինչև Քրիստոնէութեան հաստատութիւնը (150 Ք. ա. – 300 թթ. Ք. հ.), Գ. շրջան՝ Քրիստոնէութեան հաստատութիւնից մինչև Արաբացոց արշավանքները (300–640 թթ.), Դ. շրջան՝ Արաբացոց արշավանքներից մինչև քաղաքական կեանքի անկումը (640–1080 թթ.), Ե. շրջան (միջանկյալ). Հայոց իշխանութիւնը Կիլիկիայում (1080–1375 թթ.), և Զ. շրջան՝ Քաղաքական կեանքի անկումից մինչև մեր օրերը (1080–1885 թթ.)»³¹:

Ստ. Պալասանյանը հայոց պատմութեան պարբերացման համար հիմք է ընդունել հիմնականում ռազմա-քաղաքական և ազգային-կրոնական գործոնները: Նա ևս պատմութեան շարադրանքը սկսում է Նոյի ժառանգներից՝ Հայկի Հայաստան գալու և Հայոց պետութեան սկզբնավորումից (2300 թ. Ք. ա.), այսինքն՝ սկսած Հայկի Բելի հետ պատերազմից: Ըստ «Հայկ և Բել» ավանդապատման՝ Հայկ Նահապետը Տիտանյան Բելին սպանել է Ք. ա. 2492 թ. Օգոստոսի 11-ին, և այդ թվականն էլ համարվում է Հայաստանի անկախութեան և հայկական հնագույն տոմարի սկիզբը: Բայց Պալասանյանի աշխատութեանում այդ թվականը ներկայացված է շուրջ երկու դար պակաս, ինչը, հավանաբար, կարելի է համարել խմբագրա-տպագրական վրիպակ: Քրիստոնէութեան ընդունման ստույգ թվականը ևս կլորացված է՝ 301-ի փոխարեն նշված է 300 թվականը և այլն:

XIX դ. պատմաբան Քերովբե Պատկանյանը (1833–1889 թթ.) Էջմիածնի գրադարանից ի հայտ բերած Սարգիս եպ. Ջալալյանի մատենագիտական ձեռագիր ժամանակագրութեանից՝ «Պատմութիւն թագաւորացն Հայոց, որ ի Սիս» վերտառութեամբ, որում արձանագրում է Հայոց պետականութեան գաղափարը,

³⁰ Գ ա թ ը ր ճ ե ա ն ց. 1849, 4–5, 15, Գ ա թ ը ր ճ ե ա ն ց. 1852, Ի:

³¹ Պ ա լ ա ս ա ն ե ա ն. 1902, 13:

ընդ որում՝ հոլովույթի մեջ ներառելով Կիլիկիայի հայկական թագավորութ-
յունը: Դրանում մասնավորապես կարգում ենք. «Հեթում, որ է շատավիդ
բարեչնորհ բղխեալ յարմատոյ թագաւորութեան թորգոմեանս սեռի ի Ասքա-
նագեանս տոհմի»³²: Բերվածից դժվար չէ տեսնել պետականության տեսլակա-
նով ժառանգորդական կապը հայոց Ասքանացյան տոհմի և Կիլիկիայի Հեթում-
յան արքայատոհմի միջև:

Հայոց պատմության պարբերացման հարցը շոշափած հաջորդ հեղինակը
Լազարյան ճեմարանի պրոֆ. Գրիգոր Խալաթյանցն (1858–1912 թթ.) էր, ով իր
դասախոսություններում և 1910 թ. լույս տեսած «Ուրվագծեր Հայոց պատմու-
թյան» աշխատությունում պարբերացում է կատարել միջազգայնորեն ընդուն-
ված երեք հիմնական պատմափուլերով. Ա. Հին շրջան, այն է՝ հնագույն ժամա-
նակներից մինչև Արշակունիների թագավորության անկումը (428 թ.), Բ. Միջին
շրջան՝ V դարից մինչև հայկական վերջին թագավորության անկումը՝ XIV դար
(1375 թ.), Գ. Նոր շրջան՝ Կիլիկիայի Հայկական թագավորության անկումից մին-
չև իր ապրած ժամանակները (XX դարասկիզբը)³³: Նկատելի է, որ նման պար-
բերացում կատարելիս Գր. Խալաթյանցը հաշվի է առել Հայաստանի ինչպես
արտաքին, նմանապես և ներքին պայմաններն ու առանձնահատկությունները,
այդ թվում՝ քաղաքական, սոցիալական և հոգևոր-մշակութային գործոնները:
Նա Հայաստանի հին շրջանի պատմությունը բնորոշել է որպես հայոց արքա-
ների նվաճումների, պետականության ձևավորման ու ազգային ինքնության
կայացման շրջան: Խալաթյանցը հատուկ ընդգծում է քրիստոնեության խաղա-
ցած դերը, որը, նրա մեկնությամբ, հնարավորություն ստեղծեց կտրվել հեթա-
նոսական անցյալից և կապվել Արևմուտքի հետ³⁴: Ըստ նրա՝ Տիգրան Մեծի
ժամանակներից երկրի իշխող վերնախավը (ազնվականությունը)՝ որպես ֆեո-
դալ-հողատերեր, հանդիսացել են նախարարները, որոնց կալվածքներում ապ-
րելիս են եղել իրենց ենթակա՝ տնային ծառայություններ և դաշտային աշ-
խատանքներ կատարող գյուղացիները, իսկ ստրկությունը՝ որպես իրավական
ինստիտուտ, բացակայել է, սակայն եղել են ռազմագերի ստրուկներ: Գր. Խա-
լաթյանցը նշում է, որ միջնադարյան Հայաստանում գերիշխող են եղել եկեղե-
ցին ու ֆեոդալիզմը³⁵: Ինչպես տեսնում ենք, պատմաբանը բավականին իրա-
զեկ է եղել հայոց պատմության հիմնահարցերին և նրա դատողություններն ու
մեկնաբանություններն առանձնապես առարկություն չեն վերցնում:

Հայոց պատմության պարբերացման Լեոյի, Ն. Ադոնցի և Հ. Մա-
նանդյանի փորձերը նոր դարաշրջանում

Հայոց պատմության պարբերացման ծիրում որակական նոր մոտեցումներ
ու փոփոխություններ ենք տեսնում հայ պատմագրության ականավոր դեմքեր՝
Լեոյի, Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի աշխատություններում: Հայոց պատմա-
գրության երախտավոր Լեոն (Առաքել Բաբախանյանը, 1860–1932 թթ.) «Հայոց
պատմություն»-ը բաժանում է 4 մեծ դարաշրջանների. 1. Հին դարերի պատ-
մություն՝ նախամարդուց մինչև Ք. հ. V դ., 2. Միջին դարերի պատմություն,
որը սկսվում է մոտավորապես Ք. հ. V դարից՝ ընդգրկելով շուրջ հազար տարի՝
հասնելով մոտ XV դ. երկրորդ կեսը, այսինքն՝ (V–XV դդ.), 3. Նոր ժամանակի

³² Պ ա տ կ ա ն ե ա ն. 1884, 29:

³³ Халатъянц. 1910, III–V и 1.

³⁴ Տե՛ս Халатъянц. 1910, III–IV.

³⁵ Халатъянц. 1910, 165.

պատմություն XVI –XVIII դդ. ավարտը և 4. Ժամանակակից XIX դ. սկզբներից մինչև XX դ. իր ապրած օրերը³⁶: Նրա այս բաժանումների հիմքում ընկած են քաղաքական, տնտեսական և մշակութային որոշ գործոններ, թեև այդ բաժանումները համարում է պայմանական: Լեոն հայոց պատմության ամենաընդգրկուն շրջանը, սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների առումով, համարում է ավատական տիրապետության դարաշրջանը, որը, ըստ նրա, «հատուկ էր Հայաստանին հենց նրա պատմության սկզբից»³⁷: Վաստակաշատ պատմաբանը միջնադարի առաջին հատվածը, ինչպես որ ներկայացված է նրա երկրորդ հատորի բովանդակության մեջ, բաժանել է հետևյալ շրջանների. 1. Պարսկա-հունական տիրապետության, 2. Արաբա-բյուզանդական տիրապետության և 3. Գավառական անկախությունների շրջանների³⁸: Այնուհետև հաջորդ հատորում, նա պիտի ներառեր Միջնադարի երկրորդ մասի՝ սելջուկյան, մոնղոլական, կիլիկյան դարերի ժամանակաշրջանը, բայց, ինչպես պարզվում է, նրա «փորձում» առողջական վիճակով և «տկար» աչքերով պայմանավորված, չի հասցրել Միջին դարերի ամբողջական պատմությունը ավարտին հասցնել³⁹: Բացի այդ, ինչպես ինքն է խոստովանում, Միջնադարի պատմության 2-րդ մասի շարադրանքը թողել և կենտրոնացել է Ժամանակակից (XX դ.) պատմությանը՝ հատկապես հաշվի առնելով այն ազդեցությունը, որ Լեոյի վրա թողել են 1917–1920 թթ. բեկումնային իրադարձությունները⁴⁰:

Հարկ ենք համարում միջանկյալ նշել, որ Լեոն պատմության պարբերացման և, ընդհանրապես, պատմության հիմնահարցերին անդրադառնալիս Միջնադարից, Ֆրանսիական պատմագրության օրինակով, դեպի Ժամանակակից պատմության անցման սահմանագիծ է համարել XV դ. ու, հատկապես, դարի երկրորդ կեսը, երբ աշխարհիկ ու հոգևոր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում տեղի էին ունենում բնաշրջման (էվոլյուցիոն) լուրջ գործընթացներ, որոնք հետագայում պիտի անդրադարձ ունենային Հայաստանի ու հայության վարքագծի ու գործելակերպի վրա: Լեոն նկատել էր տալիս, որ այդ անցումն արտահայտվել է ոչ այնքան տնտեսաձևերի փոփոխությամբ, որքան նոր մտածելակերպի ու աշխարհայացքների ի հայտ գալով: Նա այդ շրջանի ոգին համարում էր Ռեֆորմացիան՝ եկեղեցու և կղերականության լծից ազատվելը, մարդկային մտքի աշխարհականացումը, միջնադարյան ավատատիրական կապանքներից ազատագրվելը⁴¹: Ինքնին հասկանալի է, որ հայոց խոջայական (առևտրական) կապիտալի հարցերով զբաղված պատմաբանն այդ անցման փուլում առաջնային տեղ է հատկացրել XV դ. աշխարհագրական մեծ հայտնագործություններին, ծովային և օվկիանոսային նոր ուղիների բացմանը, առևտրի ու վաճառական կապիտալի զարգացմանը: Վաստակաշատ պատմաբանն այդ հայտնագործությունները գնահատում էր ոչ թե զուտ մերկանտիլ, կապիտալ ու շահույթներ ձեռք բերելու առումով, այլ, որ աշխարհագրական հայտնագործությունները, ծովային ու ցամաքային նոր ուղիների բացահայտումը և ճանաչումը

³⁶ Լ և ո. 1917, 2, նաև՝ Լ և ո. 1940, 1, Լ և ո. 1947, 3, Լ և ո. 1967, 7:

³⁷ Լ և ո. 1967, 9:

³⁸ Տե՛ս Լ և ո. 1967, 787: Գավառական անկախություններ ասելով Լեոն նկատի է ունեցել Բագրատունիների, Արծրունիների, Սյունիների, Զաքարյանների, Օրբելյանների, Տարոնի և այլ թագավորություններն ու իշխանությունները:

³⁹ Այդ մասին տե՛ս Լ և ո. 1984, 7–8, 11:

⁴⁰ Լ և ո. 1984, 8:

⁴¹ Տե՛ս Լ և ո. 1969, 7–8:

փոփոխություններ առաջ բերեցին մարդկանց մտածելակերպում, ինչը հնարավորություն տվեց ազատագրվելու միջնադարյան սխոլաստիկայից (տիրացուականությունից), հավատալիքներից ու նախապաշարմունքներից. կույր հավատը տեղի տվեց բանականությանը, Վերածնունդը հուշակեց մարդու ազատությունը և այլն⁴²: Լեոն իր այս մեկնություններով փորձում է հիմնավորել, որ XV դ. եվրոպական աշխարհականացման այդ շրջադարձը թեև դանդաղ, բայց, այնուամենայնիվ, սկսած XVI դ., աստիճանաբար տարածում էր ստանում հայ իրականության, մասնավորապես՝ միջնադարյան քաղաքների, հայկական գաղթօջախների, հայ վաճառականության, տպագրության, մամուլի, գրականության և այլ ոլորտներում: Նա համոզմունք է հայտնում, որ մեր տառապալից հայրենիքում բուն դրած թափառական մոնոթեո-թեոստատիկական քոչվոր, անողորմ նվաճողի տիրապետության տակ ընկած, ինքնությունից և ազատությունից զրկված հայությունը, ճակատագրի բերումով գաղթաշխարհում նրա առանձին հատվածների մշտական շփումներն արևմտյան աշխարհի հետ նպաստավոր գաղափարական հող էին նախապատրաստում իրենց քաղաքական գործունեության և վերջին հաշիվով Հայոց հայրենիքի ազատագրության համար: Այդ փաստարկների հիման վրա էլ նա եզրակացնում է, որ եթե Եվրոպայի համար XV դարն է համարում՝ նոր դարաշրջանի պատմության պարբերացման սկիզբը, ապա Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության համար այդ պարբերացման սկիզբը համարվում է XVI դարը⁴³: Լեոն, օրինակ, առևտրական կապիտալի մասին խոսելիս նշում էր, որ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում ու հայության շրջանում դա եղել է հասարակական զարգացման հիմնական շարժիչ ուժը: Այդ մասին նա գրում է խոջայական կապիտալին նվիրված իր աշխատությունում: Նրա կարծիքով հայկական խոջայական կապիտալն իր նպաստն է բերել Առաջավոր Ասիայի մեծ բռնապետություններից հայ ժողովրդի ազատագրական պայքարի ու ազգային անկախության հասնելու նպատակին⁴⁴:

Այս առնչությամբ՝ մեր ժամանակների ճանաչված պատմաբան Վ. Դիլոյանը (1930–2005 թթ.) նշում է, որ XVI–XVII դդ. հայ իրականության մեջ տեղի էր ունենում հայ վաճառականական կապիտալի նախասկզբնական կուտակում, որը XVIII դ. հանգեցնում է դրա վերածվելն արդյունաբերական կապիտալի, ինչը, ցավոք, տեղի էր ունենում ոչ թե բուն հայրենիքում, այլ՝ հայկական գաղթյալներում: Սակայն այդ կապիտալը գրատպության, հրատարակությունների, թերթերի, հասարակական մտքի ներուժի վերածվելու միջոցով սկսում է մշակել ու տարածել հայրենիքի ազատագրության և պետականության վերականգնման լուսավոր գաղափարներ: Եվ դրա դրոշակակիրը դառնում է Հնդկահայ գաղթօջախը, հանձինս՝ նրա վառ ներկայացուցիչներ Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի⁴⁵:

Այս փաստարկներն ու գործոնները նկատի ունենալով չի կարելի առարկել, որ, իրոք, XV–XVI դդ. սահմանագիծը համաշխարհային կտրվածքով էական դեր է խաղացել հայ ազատագրական մտքի ու գաղափարաբանության ձևավորման վրա: Այստեղ հիշեցման կարգով փաստենք, որ ականավոր պատմաբաններ Մ. Պոկրովսկու և Լեոյի միջև մտավոր ընդհանրություններից մեկն այն էր, որ

⁴² Տե՛ս Լ Ե ո. 1969, 9:

⁴³ Լ Ե ո. 1969, 12–14:

⁴⁴ Տե՛ս Լ Ե ո. 1934, 5–6:

⁴⁵ Տե՛ս Դ ի լ ո յ ա ն. 1993, 7–8:

Պոկրովսկին, խոսելով ուշ միջնադարում համառուսական շուկայի ձևավորման մասին, գտնում էր «առևտրական կապիտալը հանդիսացել է ռուսական ինքնակալության ձևավորման գործոն»⁴⁶: Արդյունքում ստացվում է, որ եթե Պոկրովսկին խոսում է Ռուսաստանում ինքնակալության ձևավորման, ապա Լեոն հայ ազատագրական մտքի ու անկախության գաղափարի խմորումների մասին, որոնք, ի վերջո, պիտի հանգեցնեին անկախ պետականության վերականգնմանը:

Սովորաբար պատմության պարբերացման հիմնախնդիրը սերտորեն կապվում է հասարակության դասակարգային կառուցվածքի, քաղաքական ու արտադրատնտեսական հարաբերությունների պատմության հետ, քանզի, առանց այդ կառուցվածքներն ու երևույթները հստակ պատկերացնելու և հասկանալու, հնարավոր չէ լիարժեքորեն ներկայացնել պատմության գիտականորեն հիմնավոր պարբերացում: Այդ համատեքստում խնդրին առանձնահատուկ անդրադարձել է հայ պատմագիտության խոշորագույն դեմքերից Նիկողայոս Ադոնցը (1871–1942 թթ.): Նրա հետազոտության առանցքում է եղել Ֆեոդալական (ավատատիրական) տնտեսական ու քաղաքական համակարգի ուսումնասիրումը, ինչին որ նվիրված է նրա գլուխգործոց համարվող կապիտալ աշխատությունը⁴⁷: Ն. Ադոնցը հայ հասարակական-քաղաքական կյանքի երակետային գործոններից մեկը համարում է տոհմը, տոհմատիրական հարաբերությունները, իսկ հետագայում դրա անմիջական շարունակությունը կազմող էթնիկ ու ոչ էթնիկ գյուղական համայնքը: Նա իր այս կապիտալ աշխատությունում դուրս է եկել իր հետազոտության ժամանակագրական շրջանակներից և Հայաստանի սոցիալ-քաղաքական զարգացման պատմությունը գործնականում սկսում է հայ ժողովրդի կազմավորման շրջանից մինչև Ք. հ. VII դարը: Ադոնցը, հենվելով Քանեոփոնի «Անաբասիս»-ի (Ք. ա. V–IV դդ.) ու Պլինիոս Ավագի (Ք. ծ. I դ.) «Բնական պատմություն» և ուրիշ հեղինակների սկզբնաղբյուրային վկայությունների վրա, այդ ժամանակաշրջանը Հայաստանի ներքին սոցիալական տեղաշարժերի ու առաջընթացի առումով բաժանել է երկու փուլի. 1-ին փուլն անվանել է «կոմարքոսների» (հուն.՝ գյուղապետերի) շրջան՝ օգտագործելով Քանեոփոնի գեղջավազի համար կիրառած հունական տերմինը, նաև աշխատությունում նկարագրված տոհմային համակեցության կացութաձևը: Այդ փուլը նա անվանել է նաև «Տիգրանյան» շրջան՝ նկատի ունենալով VI դ. Տիգրան Երվանդյան թագավորին՝ Կյուրոսի և Աժդահակի ժամանակներում, իսկ 2-րդ փուլը, արդեն ավելի ուշ՝ «ստրատեգոսների» ժամանակաշրջանը, երբ ըստ Պլինիոս Ավագի նկարագրած Հայաստանը (I դար) բաժանված էր 120 ստրատեգիաների (լատ.՝ պրեֆեկտուրաների)⁴⁸, Ադոնցի բնորոշմամբ՝ «Արչակունյաց» շրջան, երբ Տրդատ I Արչակունին հաստատվում է Հայոց գահին, և թե ինչպես կոմարքոսներից մինչև ստրատեգիաների ձևավորումն ընկած 4-դարյա

⁴⁶ *Տե՛ս* pokrovsky.newgod.su/research/pokrovskij-i-ego-rol-v-razviti-sovetskoj-istoricheckoj-nauki/ (դիտվել է՝ 08. IV. 2025 թ.):

⁴⁷ *Տե՛ս* А д о н ц. 1908 (սույն մենագրությունը առաջին անգամ հայերեն թարգմանվել է Ա. և Է. Խոնդկարյանների կողմից՝ Ա դ ո ն ց. 1987):

⁴⁸ Պ. Սարգսյանը տեսակետ է հայտնում, որ ստրատեգները հիմնվել են ոչ թե Տրդատ I-ի օրոք (I դ.), այլ ավելի վաղ՝ Արտաշես I-ի ռեֆորմների ժամանակներից (Ք. ա. II դ.) (տե՛ս Ս ա Ր Գ ո Ս յ ա ն. 1962, 7–9):

ժամանակաշրջանում Մեծ Հայքում տոհմա-համայնքային կացութաձևից անցում է կատարվել վաղ ֆեոդալական դասային իշխանավորների՝ նախարարական համակարգի⁴⁹։ Ն. Աղոնցը Տիգրան II Մեծի դարաշրջանը համարում է տոհմատիրական հիմքերի կործանման և դասային իշխանավորների (ազնվականության) առաջացման «փոթորկալից դարաշրջան»⁵⁰։ Նա գտնում է, որ ֆեոդալական-նախարարական կարգերի հաստատումը Հայաստանում սկսվել է Տիգրան Մեծի շրջանից, երբ տոհմատիրական հարաբերությունները սկսեցին ճեղքեր տալ, ու առաջացան ապագա հողատեր-իշխանների (նախարարների) կարգեր, ինչն ավարտվեց, ականավոր պատմաբանի բնորոշմամբ՝ «Տիգրան Մեծի փոթորկալից էպոխայում»⁵¹։ Ն. Աղոնցն Արշակունիների օրոք սոցիալական հարաբերությունները բնութագրում է որպես նախարարական դարաշրջան⁵², իսկ Ք. ծ. IV–VII դդ. համարում է նախարարությունների ծաղկման շրջան։

Այսպիսով Ն. Աղոնցը հին և վաղ միջնադարյան Հայաստանի պատմությունը ներկայացրել է ոչ միայն սոսկ ժամանակային նկարագրությամբ, այլ երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական երևույթների ու տեղաշարժերի խորքային փոփոխություններն ու զարգացումները համալիր կերպով։ Այդ իսկ պատճառով էլ այս ուսումնասիրությունը դասվում է, թերևս, Հայ պատմագրության չգերազանցված աշխատությունների շարքին։ Նա նախարարական համակարգի կողքին տվել է նաև եկեղեցական հողատիրության և եկեղեցական կառույցի ու թեմերի բաժանվածության հիերարխիկ կառուցվածքը։ Սակայն նկատենք, որ Աղոնցը ֆեոդալիզմը դիտարկել է ոչ թե մարքսյան սոցիալ-դասակարգային սկզբունքով՝ իբրև արտադրության եղանակ, այլ որպես տնտեսական, քաղաքական, իրավական կազմակերպության որոշակի ձև։ Հավանաբար այդ հանգամանքը նկատի ունենալով է, որ ճանաչված պատմաբան Գ. Սարգսյանը, ցավոք, նրան ներկայացնում է որպես բուրժուական պատմագրության ներկայացուցիչ⁵³։

Պատմության արտադրանեղանակային (ֆորմացիոն) պարբերացման տեսակետից, ինչպես նկատում ենք, Ն. Աղոնցն անգամ Տիգրան Մեծի շրջանում ակնարկ չի անում ստրկության և ստրկատիրական հասարակության գոյության մասին։ Ն. Աղոնցի գործը ավատատիրության մեկնության բնագավառում շարունակել ու զարգացրել է Խորհրդային Հայաստանի համալսարանի առաջին ռեկտոր Հակոբ Մանանդյանը (1873–1952 թթ.) հատուկ այդ խնդրին նվիրված իր մենագրությունում⁵⁴։ Նա նույնպես ֆեոդալիզմի սկզբնավորումը Հայաստանում տանում է ավելի վաղ շրջան՝ Արտաշեսյան թագավորության հաստատումից առաջ՝ նույնիսկ հնարավոր համարելով ֆեոդալիզմի որոշ սաղմերի

⁴⁹ Տե՛ս Ա դ ո ն ց . 1987, 434–435, 474:

⁵⁰ Ա դ ո ն ց . 1987, 455:

⁵¹ А д о н ц . 1908, 410.

⁵² Տե՛ս Ա դ ո ն ց . 1987, 485: Նախարար (naxarar) բառը ծագում է «նահապետ» բառից, որը, սակայն, իր մեջ մարմնավորում էր սոցիալական, տնտեսական, վարչաքաղաքական և իրավական իմաստ: «Նախարար»-ը համարվել է նաև «սատրապ» բառի հոմանիշ (Ս ա Ր Գ ս Յ ա ն . 1962, 8–9):

⁵³ Ս ա Ր Գ ս Յ ա ն . 1962, 6:

⁵⁴ Տե՛ս Մ ա ն ա ն դ յ ա ն . 1934: Հիշեցնենք, որ նա պատմագիտությամբ է զբաղվել ինչպես նախախորհրդային, այնպես էլ Խորհրդային Հայաստանում:

առկայությունն իսպղական կամ թե նույն է՝ ուրարտական պետությունում⁵⁵: Հ. Մանանդյանը Ֆեոդալիզմը դիտարկում է ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև որպես սոցիալ-քաղաքական հատկանիշներ ունեցող կազմակերպություն⁵⁶: Նա Ֆեոդալիզմի դարաշրջանը Հայաստանում ժամանակագրական առումով բաժանում է երեք շրջափուլի՝ 1. Նախարարական Ֆեոդալիզմի շրջան, 2. Զարգացած Ֆեոդալիզմի շրջան և 3. Քայքայվող Ֆեոդալիզմի շրջան⁵⁷: Մանանդյանը գտնում է, որ Հայաստանում ստրկությունն եղել է, սակայն գերիշխել է համայնական հողատիրությունը, որ ստրկությունը, դասական համարվող հունա-հռոմեական ստրկատիրության համեմատ, կրել է նահապետական բնույթ և էապես չի թափանցել արտադրության ոլորտ⁵⁸: Բացի այդ՝ Ադոնցի պես նա ևս հաստատում է, որ Հայաստանում հնագույն ժամանակներից ի վեր հիմնական արտադրողը եղել է համայնական գյուղացին, ով իրավապես ազատ էր, սակայն ժառանգաբար կապված էր իր համայնքի հետ: Ի տարբերություն Ն. Ադոնցի՝ եթե Հ. Մանանդյանն ակնարկում է նահապետական տիպի ընտանեկան ստրուկների կամ գերիների գոյությունը մասին, ապա դա բնավ հիմք չի տալիս խոսելու ստրկատիրական կարգերի գոյությունը մասին: Այս առնչությամբ աղբյուրագետ Ա. Աբրահամյանը, համաձայն չլինելով Հ. Մանանդյանի արտահայտած տեսակետներին՝ Հայաստանում ստրկության գոյությունը հարցում, գտնում է, որ պետք է մերժել Արտաշեսյանների և դրա նախորդող շրջանում Ֆեոդալիզմի երևույթի մասին տեսությունը և դրա փոխարենն ընդունել ստրկատիրական հասարակության փաստը: Եվ այդ հիման վրա էլ նա Արշակունիների թագավորության սկիզբնավորումը դիտել է որպես միջին դարեր⁵⁹:

Եզրակացություն

Հանրագումարի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ, սկսած Պատմահայր Մ. Խորենացուց, գրեթե ամբողջ միջնադարում հայ պատմիչ-պատմագիրների մի մասը հետևել է պատմության շարադրման ու պարբերացման խորենացիական մոտեցմանն ու սկզբունքներին, իսկ մյուս մասը պարզապես բավարարվել է մեծամասամբ հայ թագավորական, նախարարական, իշխանական տոհմերի ու իրենց ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների նկարագրությամբ: Իրա հետ հայ միջնադարյան պատմիչ-պատմագիրներին, բնականաբար, բնորոշ է եղել այդ ժամանակաշրջանը հատկանշող աստվածաբանական (թեոլոգիական), հոգևոր-կրոնական ոգին, գաղափարական մոտեցումներն ու չափանիշները:

Արդեն նոր դարաշրջանում՝ Մխիթարյան միաբանության ասպարեզ իջնելը մեծապես նպաստեց հայ հոգևոր-մշակութային, նաև պատմագրության վերելքին, այդ թվում՝ պատմության պարբերացման հիմնահարցերի քննությանը: Մխիթարյան պատմագիր հեղինակներն իրենց ծանրակշռ ներդրումն են ունենում հայոց պատմության բազում հիմնահարցերի, այդ թվում՝ նաև պատմության պարբերացմանը: Մխիթարյան միաբանության պատմագիր հեղինակներից

⁵⁵ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 10–11, 251, 257, նաև՝ М а н а н д я н. 1945, 5.

⁵⁶ Տե՛ս Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 24, նաև՝ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1981, 206:

⁵⁷ Տե՛ս Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 304:

⁵⁸ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 239, նաև՝ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1981, 443:

⁵⁹ Ա բ ռ ա հ ա մ յ ա ն. 1947, 42:

Հատկապես կարելի է առանձնացնել Մ. Չամչյանին, ով Հայոց պատմության պարբերացումների հիմքում դրել է հայկական թագավորությունների գործունը, այսինքն՝ պետականության գաղափարը:

Հայոց պատմության պարբերացման ծիրում XIX դ. վերջից որակական նոր մոտեցումներ ու փոփոխություններ ենք տեսնում հատկապես հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչներ՝ Լեոյի, Ն. Աղունցի և Հ. Մանանդյանի աշխատություններում: Նրանց մինչխորհրդային շրջանի աշխատություններին բնորոշ է դառնում պատմության պարբերացման բազմազործունայնություն՝ պետաքաղաքական, արտադրատնտեսական, իրավական, հոգևոր-մշակութային գործոններն ու հատկանիշները: Ընդ որում, նրանք հիմնահարցը փորձել են ներկայացնել ոչ թե գուտ ժամանակագրական-փուլային, այլ տվյալ դարաշրջանի ընկերային-տնտեսական, դասակարգային կառուցվածքի, պետաիրավական ու քաղաքական հարաբերությունների փաստարկված հոլովույթի մեջ, ինչը հատկապես շատ վիճահարույց է եղել Հայոց հին պատմաշրջանի հիմնահարցերը լուսաբանելիս:

Արարատ Հակոբյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նոր և նորագույն պատմաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի, Հայաստանի առաջին Հանրապետության, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, հայ պատմագրության, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, Հայաստանի առաջին Հանրապետության պարբերական մամուլի հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության և ավելի քան 160 հոդվածի: ORCID:0009-0005-8875-5970. ararathakobyan47@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբրահամյան Ա. 1947, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի շուրջ. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 2, էջ 29–44:
- Աղունց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, հայերեն թարգմ.: Ա. և Է. Խոնդկարյանների, Երևան, «Հայաստան» հրատ., 635 էջ:
- Առաքել Դավրիժեցի. 1990, Գիրք պատմութեանց, Երևան, ՀԳԱ հրատ., 592 էջ:
- Արիստակես Լաստիվերցի. 1971, Պատմություն, Երևան, «Հայաստան» հրատ., 155 էջ:
- Բերդյակ Ն. 2019, Պատմության իմաստը, թարգմ. Դ. Մոսինյանի, Երևան, «ՎՄՎ-պրինտ», 268 էջ:
- Գաթրոճեանց Հ. Վ. Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս, հ. Ա (Հին պատմութիւն), Վիէննա, ի վանս պաշտպան Սբ Աստ., 1849 (ՌՄԴ), 620 էջ և հ. Բ, Վիէննա, 1852, 608 էջ:
- Գարագաշեան Ա. 1895, Քննական պատմություն Հայոց, մասն Ա, Թիֆլիս, տպ. «Մ. Շարածէ եւ ընկ.»., 278 էջ:
- Դիլոյան Վ. 1993, Հայոց պատմության պարբերացման մը քանի հարցեր. – «Բանբեր Երևանի Համալսարանի» (Երևան), № 3, էջ 3–9:
- Թովման Արծրունի և Անանուն. 1987, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 406 էջ:

- Լեո. 1917, Հայոց պատմություն, հ. Ա, Թիֆլիս, տպ. «Սլովո», 728 էջ:
- Լեո, 1934, Խոջայական կապիտալը յեվ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, հ. 1, Յերեվան, «Պետհրատ», 373 էջ:
- Լեո. 1940, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, «Արմֆան», 510 էջ:
- Լեո. 1947, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, Հայպետհրատ, 761 էջ:
- Լեո. 1967, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 787 էջ:
- Լեո. 1969, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, «Հայաստան» հրատ., 511 էջ:
- Լեո. 1984, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ., 591 էջ:
- Կիրակոս Գանձակեցի. 1982, Հայոց պատմություն, թարգ.՝ Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 352 էջ:
- Հակոբյան Ս. 1947, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջ. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 7, էջ 35–38:
- Հակոբյան Ս. 1948, Ստրկությունը և ստրկատիրական հասարակական ֆորմացիան Հին Հայաստանում. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 8, էջ 13–38:
- Հակոբյան Վ. 1952, Դիսկուսիա՝ նվիրված հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցերին. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 1, էջ 115–124:
- Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները. – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2017, № 3, էջ 194–240:
- Հովհաննես Դրասխանակերտցի. 1996, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 397 էջ:
- Հովհաննիսյան Պ. 1990, Հակոբ Մանանդյանի թղթերից. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2, էջ 127–132:
- Հովհաննիսյան Պ. 1993, Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված գիտաժողով. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 4, 148–161:
- Ղևոնդ Ալիշան. 1901, Հայապատում (պատմիչք եւ պատմութիւնք Հայոց), Վենետիկ, ի Վանս Ս. Ղազարու, 649 էջ:
- Մանանդյան Հ. 1934, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Յերեվան, Մելքոնյան ֆոնդի հրատ., 337 էջ:
- Մանանդյան Հ. 1981, Երկեր, հ. Դ, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 518 էջ:
- Մովսես Խորենացի. 1961, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, «Հայպետհրատ», 448 էջ:
- Չամչեանց Միքայել. 1784, Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Ա, Վենետիկ, տպ. Պետրոսի Վաղվազեանցի, 803 էջ:
- Պալասանեան Ստ. 1902, Պատմութիւն Հայոց սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, տպ. Տ. Մ. Ռօտինեանցի, 599 էջ:
- Պատկանեան Բ. 1884, Նշխարք մատենագիտութեան հայոց, Ս. Պետերբուրգ, տպ. Ա. Կրասկու, 72 էջ:
- Սարգսյան Գ. 1962, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 94 էջ:
- Սարգսյան Գ. Խ. 1965, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 191 էջ:
- Սարուխանյան Ն. 2013, Հայ պատմագրությունը XIX դարում և XX դարասկզբին, Երևան, «Գիտություն» հրատ., 544 էջ:

Սեբեոսի Եպիսկոպոսի պատմություն. 1939, առաջարան և ծանոթ. Ստ. Մալխասեանցի, Յերեվան, «Արմֆան», 216 էջ:

Ստեփանոս Օրբելյան. 1986, Սյունիքի պատմություն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 616 էջ:

Ստեփաննոսի Տարսեղոյ Ասողական Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, տպ. Սկրոյտոդովի, 1885, 437 էջ:

Վարդան Արևելցի. 2001, Տիեզերական պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 408 էջ:

Адонц Н. 1908, Армения в эпоху Юстиниана. С.-Петербург, тип. «Императорской Академии наук», 526 с.

Вардумян Г. 2024, Взаимосвязь религиозной и государственной систем в Древней Армении. – «Вопросы истории Армении» (Ереван). № 2, с. 3–23.

Еремян С. Т. 1950, О рабстве и рабовладении в Армении. – «Вестник древней истории» (М.-Л.), № 1, с. 12–26.

Халатьянц Г. 1910, Очерки истории Армении. М., Типограф Ю. Венер., 360 с.

Бердяев Н. 1990, Истоки и смысл русского коммунизма. М., «Наука», 224 с.

Манандян Я. А. 1945, Проблема общественного строя доаршакидской Армении. – «Исторические записки» (М.), № 15, 20–25 с.

«pokrovsky.newgod.su/research/pokrovskij-i-ego-rol-v-razvitii-sovetskoj-istoricheckoj-nauki/ (դիտվել է՝ 08. IV.2025 թ.).

REFERENCES

Abrahamyan A. 1947, Hay zhoghovrdi patmut'yan periodizats'iaiy shurj. – «Teghekgagir» Hayk. SSR GA, t'iv 2, 29–44 ej (In Armenian).

Adonts' N. 1987, Hayastany Hustinianosi darashrjanum, hayeren t'argm.' A. yev E. Khondkaryanneri, Yerevan, «Hayastan» hrat., 635 ej (In Armenian).

Adonts N. 1908, Armeniya v epokhu Yustiniana. S.-Peterburg, tip. «Imperatorskoy Akademii nauk», 526 s. (In Russian).

Arak'el Davrizhets'i. 1990, Girk' patmut'eants', Yerevan, HGA hrat., 592 ej (In Armenian).

Aristakes Lastiverts'i. 1971, Patmut'yun, Yer., «Hayastan» hrat., 155 ej (In Armenian).

Berdyayev N. 1990, Istoki i smysl russkogo kommunizma. M., «Nauka», 224 s. (In Russian).

Berdyayev N. 2019, Patmut'yan imasty, t'argm. D. Mosinyani, Yerevan, «VMV-print», 268 ej (In Armenian).

Diloyan V. 1993, Hayots' patmut'yan parberats'man my k'ani harts'er. – «Banber Yerevani Hamalsarani» (Yerevan), № 3, ej 3–9 (In Armenian).

Gat'yrcheants' H. V. Tiyezerakan patmut'iwn i skzbane ashkharhi minch'ev ts'mer zhamanakans, h. A (Hin patmut'iwn), Vienna, i vans pashtpan Sb Ast., 1849 (RRSGHY), 620 ej yev h. B, Viyenna, 1852, 608 ej (In Armenian).

Garagashean A. 1895, K'nnakan patmut'yun Hayots', masn A, T'iflis, tp. «M. Sharadze yev ynk.», 278 ej (In Armenian).

- T'ovman Artsruni yev Ananun. 1987, Patmut'yun Artsrunyats' tan, Yerevan, «Sovetakan grogh» hrat., 406 ej (In Armenian).
- Leo. 1917, Hayots' patmut'yun, h. A, T'iflis, tp. «Slovo», 728 ej (In Armenian).
- Leo, 1934, Khojayakan kapituly yev nra k'aghak'akan-hasarakakan dery hayeri mej, h. 1, Yerevan., «Pethrat.», 373 ej (In Armenian).
- Leo. 1940, Hayots' patmut'yun, h. G, Yerevan, «Armfan», 510 ej (In Armenian).
- Leo. 1947, Hayots' patmut'yun, h. 2, Yerevan, Haypethrat, 761 ej (In Armenian).
- Leo. 1967, Hayots' patmut'yun, h. 2, Yerevan, «Hayastan» hrat., 787 ej (In Armenian).
- Leo. 1969, Yerkeri zhoghovatsu, h. 3, «Hayastan» hrat., 511 ej (In Armenian).
- Leo. Yerkeri zhoghovatsu, 1984, h. 4, Yerevan, «Hayastan» hrat., 591 ej (In Armenian).
- Hakobyan S. 1947, Hay zhoghovrdi patmut'yan periodizats'iaiyi harts'i shurj. – «Teghekagir» Hayk. SSR GA, № 7, ej 35–38 (In Armenian).
- Hakobyan S. 1948, Strkut'yuny yev strkatirakan hasarakakan formats'ian Hin Hayastanum. – «Teghekagir» Hayk. SSR GA, № 8, ej 13–38 (In Armenian).
- Hakobyan V. 1952, Diskusia, nvirvats hay zhoghovrdi patmut'yan periodizats'iaiyi harts'erin. – «Teghekagir» Hayk. SSR GA, № 1, ej 115–124 (In Armenian).
- Hayots' patmut'yan nor parberats'man khndirneri. – «Hayagitut'yan harts'er» (Yerevan), 2017, № 3, ej 194–240 (In Armenian).
- Ghevond Alishan. 1901, Hayapatum (patmich'k' yev patmut'iwnk' Hayots'), Venetik, i Vans S. Ghazaru, 649 ej (In Armenian).
- Khalat'yants G. 1910, Ocherki istorii Armenii. M., Tipograf Y. Vener., 360 s. (In Russian).
- Kirakos Gandzakets'i. 1982, Hayots' patmut'yun, t'arg. V. Arak'elyani, Yerevan, «Sovetakan grogh» hrat., 352 ej (In Armenian).
- Hovhannes Draskhanakertts'i. 1996, Hayots' patmut'yun, Yerevan, YePH hrat., 397 ej (In Armenian).
- Hovhannisyanyan P. 1990, Hakob Manandyani t'ght'erits'. – «Banber Hayastani arkhivneri», № 2, ej 127–132 (In Armenian).
- Hovhannisyanyan P. 1993, Hay zhoghovrdi patmut'yan parberats'man himnaharts'in nvirvats gitazhoghov. – HH GAA «Lraber hasarakakan gitut'yunneri», t'iv 4, 148–161 (In Armenian).
- Manandyan H. 1934, Feodalizmy Hin Hayastanum (Arshakunineri u marzpanut'yan shrjan), Yerevan., Melk'onyan fondi hrat., 337 ej (In Armenian).
- Manandyan Y. A. 1945, Problema obshchestvennogo stroya doarshakidskoy Armenii. – «Istoricheskiye zapiski» (M.), № 15, 20–25 s. (In Russian).
- Manandyan H. 1981, Yerker, h. D, Yerevan, Hayk. SSH GA hrat., 518 ej (In Armenian).
- Movses Khorenats'i. 1961, Hayots' patmut'yun, t'argm. yev tsanot'. St. Malkhasyants'i, Yerevan, «Haypethrat», 448 ej (In Armenian).

Ch'amch'eants' Mik'ayel. 1784, Patmut'iwn hayots' i skzbane ashkharhi minch'ev ts'am tearn 1784, h. A, Venetik, tp. Petrosi Vaghvazeants'i, 803 ej (In Armenian).

Palasanean St. 1902, Patmut'iwn Hayots' skzbits' minch'ev mer orery, T'iflis, tp. T. M. Rotineants'i, 599 ej (In Armenian).

Patkanean K'. 1884, Nshkhark' matenagitut'yeam hayots', S. Peterburg, tp. A. Krayevsku, 72 ej (In Armenian).

Sargsyan G. 1962, Hin Hayastani sots'ial-tntesakan zargats'man ughineri masin, Yerevan, Hayk. SSR GA hrat., 94 ej (In Armenian).

Sargsyan G. Kh. 1965, Movses Khorenats'u «Hayots' patmut'yan» zhamanak-grakan hamakargy, Yerevan, Hayk. SSR GA hrat., 191 ej (In Armenian).

Sarukhanyan N. 2013, Hay patmagrut'yuny XIX darum yev XX daraskzbin, Yerevan, «Gitut'yun» hrat., 544 ej (In Armenian).

Sebeosi Yepiskoposi patmut'iwn. 1939, arajaban yev tsanot'. St. Malkhasyants'i, Yerevan, «Armfan», 216 ej (In Armenian).

Step'anos Orbelyan. 1986, Syunik'i patmut'yun, Yerevan, «Sovetakan grogh» hrat., 616 ej (In Armenian).

Vardan Arevelts'i. 2001, Tiyezerakan patmut'yun, Yerevan, YePH hrat., 408 ej (In Armenian).

Vardumyan G. 2024, Vzaimosvyaz' religioznoy i gosudarstvennoy sistem v Drevney Armenii. – «Voprosy istorii Armenii» (Yerevan). № 2, s. 3–23 (In Russian).

Yeremyan S. T. 1950, O rabstve i rabovladdenii v Armenii. – «Vestnik drevney istorii» (M.-L.), № 1, s. 12–26 (In Russian).

«pokrovsky.newgod.su/research/pokrovskij-i-ego-rol-v-razvitii-sovetskoj-istorichec koj-nauki/ (դիսկոմի Կ՝ 08. IV. 2025 թ.):

АРМЯНСКИЕ ИСТОРИОГРАФЫ И ИСТОРИКИ ПО ВОПРОСУ
ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ АРМЕНИИ
(V в. – начало XX в.)

ԱՐԱՐԱՏ ԱԿՕՍՅԱՆ

Резюме

Ключевые слова: историографы-историки, Хоренаци, Армения, периодизация истории, общественный строй, Чамчян, Алишан, Лео, Адонц.

Одним из фундаментальных вопросов армянской историографии является периодизация истории Армении, способствующая систематизированному изложению исторического прошлого Армении и армянского народа, повышению уровня научного исследования и раскрытию исторической истины. Богатое письменное наследие армянских историографов дает основание утверждать, что попытки периодизации истории Армении предпринимались изначально. Основоположником армянской историографии является

Мовсес Хоренаци – автор монументального труда «История Армении» (V век). В последующие века армянские историографы-историки – Себеос, Гандзакеци, Даврижеци и др. продолжили традиции Хоренаци как в направлении изложения истории, так и ее хронологической систематизации. Изучение трудов армянских историков средневекового периода показывает, что в их трудах естественным образом преобладал христианский, библейский образ мышления.

Уже в новую эпоху приобщение к европейским многофакторным подходам и критериям периодизации истории в значительной степени способствовало приведению в соответствие работ по истории (как в хронологическом, так и содержательном отношении) с западными стандартами, разумеется, с учетом особенностей армянской истории. В этой связи следует особо выделить работы одного из известных историографов Мхитарянского ордена М. Чамчяна, а позже – представителей восточноармянской историографии Лео, Н. Адонца и А. Манандяна, которые в своих трудах дореволюционного периода не только представили хронологическую периодизацию армянской истории, но и при этом учли аргументированную совокупность государственно-правовых, политических, социально-экономических, классовых и духовно-культурных реалий данного исторического периода.

Արարատ Առարատ Հակոբյան – ծ. և. ու. ռ., պրոֆ., վարչապետի գործակալի օրինակի գործակալ, Հայաստանի պատմության ինստիտուտի ՀՀԱՀ ՊԱ. Մասնագիտական շահեր: հայաստանի հասարակական-քաղաքական մտքի նորից և նորիցից քաղաքական պատմության Արմենիայի, Առարատ Հանրապետության Արմենիայի, Մոսկովյան և Կարսյան պայմանագրերի 1921 թ., հայաստանյան պատմագրության, սովետական քաղաքական ռեպրեսիաների, հայաստանյան պարբերական տպագրության Առարատ Հանրապետության Արմենիայի. Առարատ 20 մոնոգրաֆիաների և ավելի 160 գիտական հոդվածների.

ORCID: 0009-0005-8875-5970. ararathakobyan47@gmail.com

ARMENIAN HISTORIOGRAPHERS AND HISTORIANS ON THE PERIODIZATION OF HISTORY OF ARMENIA

(V – early XX centuries)

ARARAT HAKOBYAN

Summary

Keywords: historiographers and historians, Khorenatsi, Armenia, periodization of history, social system, Chamchyan, Alishan, Leo, Adonts.

One of the important fundamental issues of Armenian historiography is the periodization of Armenian history, which undoubtedly contributes to the systematized presentation of the historical past of Armenia and the Armenian people, to the improvement of the level of scientific research and to the disclosure

of historical truth. The rich written heritage of Armenian historiographers gives grounds to affirm that attempts to periodize the history of Armenia were undertaken from the very beginning. The founder of Armenian historiography is Movses Khorenatsi, the author of the monumental work “History of Armenia” (V century). In the following centuries Armenian historiographers and historians- Sebeos, Gandzaketsy, Davrizhetsy and others, continued the traditions of Khorenatsi both in the direction of presenting history and in its chronological systematization. The study of the works of Armenian historians of the medieval period shows that the Christian, biblical way of thinking naturally prevailed in their works.

Already in the new era, the introduction of European multifactorial approaches and criteria for periodization of history significantly contributed to the alignment of works on history (both in chronological and substantive terms) with Western standards, of course, taking into account the peculiarities of Armenian history. In this regard, it is necessary to highlight the works of one of the famous historiographers of the Mkhitarian Order, M. Chamchyan. It is also necessary to mention the later representatives of Eastern Armenian historiography- Leo, N. Adonts and A. Manandyan, who, in their works of pre-revolutionary period, not only presented chronological periodization of Armenian history, but also took into account the reasoned totality of state-legal, political, socio-economic, class and spiritual-cultural realities of this historical period.

Ararat Hakobyan – Doctor of Historical Sciences, Professor, Leading Researcher at the Department of Modern History of the Institute of History of the National Academy of Sciences RA. Scientific interests: problems of social and political thought of the new and modern periods of the history of Armenia, the First Republic of Armenia, the Moscow and Kars Treaties of 1921, Armenian historiography, Soviet political repressions, problems of the periodical press of the First Republic of Armenia. Author of 20 monographs and more than 160 scientific articles. ORCID: 0009-0005-8875-5970. ararathakobyan47@gmail.com